



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի ներկայացուցիչ
պարոն Ա.Խաչատրյանին
հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Արմավիր,
Լերմոնտովի փող., տուն 71
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետ
պարոն Ս.Այվազյանին

Կից ուղարկվում է Ձեր գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի 20.03.2012թ. թիվ 9/3 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/3

20 մարտի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի ներկայացուցչի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 22.02.2012թ. թիվ 2110345 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 22.02.2012թ. թիվ 2110345 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակրային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 27.09.2005թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 22.02.2012թ-ին կազմվել է թիվ 2110345 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչներ Արթուր Ղազարյանի և Արմեն Շառոյանի կողմից Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանին պատկանող Արմավիր քաղաքի Երևան 40ա հասցեում գտնվող դեղատնից 22.02.2012թ-ին ժամը 17:40-ին կատարվեց հսկիչ գնում Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի վաճառողուհի Հասմիկ Մանուկյանից: Գնվեց մեկ հատ <Պարացետամոլ> տեսակի դեղահաբ՝ 100 դրամ արժեքով, որի համար չտպվեց և չտրվեց ՀԴՄ կտրոն (<ՀԴՄ-ի ժամը խախտված էր>): <Հ> հաշվետվությամբ հասույթը կազմեց 0 դրամ, իսկ դրամակրում առկա էր 12560 դրամ: Ժամը 17:45-ին գնված ապրանքի արժեքը մուտքագրվեց ՀԴՄ և դուրս բերվեց նոր <Հ> հաշվետվություն:

Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանին <<հսկիչ-դրամակրային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի ներկայացուցչի գանգատում մասնավորապես նշված է.

22.02.2012թ-ին ժամը 17:30-ի սահմաններում փակվել է ՀԴՄ-ի օրվա ամփոփը և գրոյացվել է: Աշխատանքային օրվա ավարտին մուտքի մոտ հայտնվել է Արմավիրի ՏՀՏ հարկային տեսուչ Արթուր Ղազարյանը և հայտարարել, որ ինչ-որ մեկին աշխատանքային օրվա ընթացքում վաճառվել է 100 դրամանոց պարացետամոլ, չտրամադրելով ՀԴՄ կտրոն: Պահանջվել են ապացույցներ, քանզի նման բան տեղի չի ունեցել: Չկարողանալով տրամադրել համապատասխան ապացույցներ Ա.Ղազարյանը հեռացել է: Եզրակացությունն այն է, որ անկախ նրանից, որ օրենքի խախտում տեղի չի ունեցել և չի արձանագրվել, հարկային տեսուչն իր հայեցողությամբ, առանց որևէ ապացույցի, կարող է հայտարարել և տուգանել: Սա դիտվում է որպես մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում և պաշտոնի չարաշահում:

Ավելացնեմ նաև, որ առկա են վկաներ և համապատասխան ապացույցներ, որ նման բան տեղի չի ունեցել: Ակտը ստորագրվել է նաև ոմն Շառոյանի կողմից, որն ընդհանրապես ծանոթ չէ Ա.Ղազարյանի անօրինական գործունեությանը:

Ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն փաստի վրա, որ ակտը ստանալուց առաջ այն քննարկել եմ հարկային տեսչության պաշտոնատար անձանց և ստուգում կատարած տեսուչի հետ, սակայն ոչ մի ապացույց չեմ ստացել: Ակտը ստացել եմ նամակի տեսքով, որը մուտք է արվել 27.02.2012թ:

Խնդրում եմ մանրամասն ուսումնասիրել և համապատասխան լուծում տալ այս խնդրին, հակառակ դեպքում կփորձեմ իմ շահերը պաշտպանել դատական կարգով:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգումն իրականացվել է « օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների հիմնավորվածության ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից « ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման և հսկիչ գնման ուսումնասիրության ընթացքում իրականացվող գործողությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմվող, համապատասխանաբար՝ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) ընթացակարգ: Մասնավորապես, « ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված « ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են, թե հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում ինչպիսի գործողություններ պետք իրականացվեն, իսկ ստուգման արդյունքում կազմվող ակտում ինչ տվյալներ (տեղեկություններ)՝ արտացոլվեն:

Շրջաբերական նամակի «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է, որ վաճառողի կողմից համապատասխան վճարման արժեքը ՀԴՄ չմուտքագրվելու և ՀԴՄ կտրոն չտրամադրելու դեպքում ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ՀԴՄ-ից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը, կատարված վճարման արժեքը մուտքագրվում է ՀԴՄ, դուրս է բերվում կտրոն և կրկին անգամ դուրս է բերվում <Z> հաշվետվությունը: Ընդ որում հարկ է նշել, որ ըստ շրջաբերական նամակի, ստուգման ակտում պետք է նշվի համապատասխան գործողությունը (գնումը) փաստացի կատարող անձի անուն-ազգանունը, որը ներառված է հանձնարարագրում:

Ըստ շրջաբերական նամակի, հիշատակված գործողություններն իրականացվելուց հետո գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողները պետք է ետ վերադարձնեն տնտեսվարող սուբյեկտին, կազմեն համապատասխան արձանագրություն, ինչպես նաև ետ ստանան գնման գումարը և տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի մոտ իրականացված ստուգման ընթացքում շրջաբերական նամակով նախատեսված ընթացակարգը չի պահպանվել: Մասնավորապես, քննարկվող դեպքում ստուգման ակտում նշված է, որ գնումը կատարվել է

ստուգման հանձնարարագրում ընդգրկված երկու պաշտոնատար անձանց կողմից, հետևապես ստուգման ակտից պարզ չէ, թե փաստացի գնումը ում կողմից է կատարվել:

Ստուգման ակտում նշված է նաև, որ գնումը կատարվել է 17:40-ին: Ակտում նշված է նաև, որ «ՀԴՄ-ի ժամը խախտված էր»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ստուգման ակտի անբաժանելի մասը հանդիսացող ֆինակալային հաշվետվությունները, արձանագրեց, որ դրանք, ըստ էության, չեն կարող դիտվել որպես ակտով արձանագրված խախտումը հիմնավորող ապացույցներ, քանի որ ստուգման ակտում նշված չէ, թե ՀԴՄ-ի ժամի խախտումը ինչքան է կազմել:

Բացի այդ, գնված ապրանքները ստուգումն իրականացնող հարկային ծառայողները ետ չեն վերադարձրել տնտեսվարող սուբյեկտին, չեն կազմել համապատասխան արձանագրություն, ետ չեն ստացել գնման գումարը և կատարված վճարման արժեքի չափով չեն տպել վերադարձի կտրոն:

Քննարկման ընթացքում արձանագրվեց նաև այն փաստը, որ ստուգման ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին»:

Քննարկվող դեպքում թե ստուգման ակտի նախագիծը, թե ստուգման ակտը կազմվել են նույն օրը՝ 22.02.2012թ-ին: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի ներկայացուցիչը ժխտում է ստուգման ակտով արձանագրված խախտումը կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Լիլիթ Խաչատրյանի մոտ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել վերջինիս կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտվելու փաստը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 22.02.2012թ. թիվ 2110345 ստուգման ակտը:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ՔԱՐՍԵՂՅԱՆ